EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ 04-01 «18» 01 2023 թ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» (քաղաքական գիտություններ) մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սիլվա Ռուբենի Խաչիկյանի «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում (քաղաքագիտական վերլուծություն)» ատենախոսության վերաբերյալ

Սիլվա Ռուբենի Խաչիկյանի ատենախոսության շրջանակներում Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձի ուսումնասիրությունը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում ունի արդիական նշանակություն՝ պայմանավորված ներկա ժամանակներում հայկական «խաղաղ ատոմի» զարգացման ոլորտում առաջացող մարտահրավերներով:

Ատենախոսության մեջ հեղինակին հաջողվել է հիմնավորել թեմայի արդիականությունն ու կարևորությունը: Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացումն առաջնահերթություն է ազգային և էներգետիկ անվտանգության ու երկրի տնտեսական և աշխարհաքաղաքական մրցունակության ապահովման համար՝ հաշվի առնելով տարածաշրջանային աշխարհաքաղաքական փոփոխությունները: Հարավային Կովկասում ատոմային էներգետիկայի զարգացման միտումները, ինչպես նաև վերջինիս վրա զգալի ազդեցություն ունեցող քաղաքական գործընթացների փոխկապվածությունը թելադրում են «խաղաղ ատոմի» զարգացման հայկական փորձի ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ տրանսֆորմացիոն աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում:

ՀԵՂ ՍԱՐԴԿ
ԿՈՌԱՎԱՐ
EUA HU
MANAGE

EURASHE
European Association of Institutions in Higher Education

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամ
ՀՀ | ք. Երևան | Դավիթ Անհաղթի 10
«EUROPEAN UNIVERSITY» Foundation
10 Davit Anhaght str., Yerevan, Armenia
+374 11 24 00 38
info@eua.am | www.eua.am

Ատենախոսը կարողացել է լուծել առաջադրված հետազոտական խնդիրները ատենախոսության նպատակին հասնելու համար, այն է՝ Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման քաղաքական ասպեկտների համալիր վերլուծություն միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում: Ատենախոսությունը հատկապես արժևորվում է իր գիտական նորույթով, որն անհրաժեշտ պայման է թեկնածուական ատենախոսությունների գնահատման համար: Հարկ է նշել, որ հեղինակին հաջողվել է հասնել իր հետազոտական նպատակին՝ ատենախոսության համակարգված կառուցվածքի շնորհիվ:

Ատենախոսության առաջին՝ «Միջուկային գործոնը ժամանակակից միջազգային անվտանգության համակարգում» գլխում ուսումնասիրության են ենթարկվել միջազգային անվտանգային մեխանիզմները «խաղաղ» և «ռազմական ատոմի» ոլորտներում, ատոմային էներգետիկայի նշանակությունը կայուն զարգացման գործում, ինչպես նաև ատոմային էներգետիկայի ոլորտում առկա խնդրահարույց հարցերը, ինչպիսիք են ռադիացիոն վթարներն ատոմային էլեկտրակայաններում, դրանով պայմանավորված բացասական հասարակական վերաբերմունքը միջուկային էներգետիկայի նկատմամբ և ռադիոակտիվ թափոնների կառավարման քաղաքական հիմնախնդիրները: Սույն գլխում նաև անդրադարձ է կատարվել ատոմային էներգետիկայի զարգացման միջազգային փորձին և պետական միջուկային քաղաքականության հիմնական դրսևորումներին:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման մարտահրավերների համատեքստում» գլխում ատենախոսը ներկայացրել է Հայաստանում պետական միջուկային քաղաքականությունը՝ ոլորտի վերաբերյալ առկա հիմնական օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերի վերլուծության միջոցով, ինչպես նաև հայկական «խաղաղ ատոմի» զարգացման պատմությունը և ներկա մարտահրավերները՝ հաշվի առնելով Հայաստանի էներգետիկ անվտանգության խնդիրները:

ԱՅԻՆ ՌԵ
ՅԱՆ ԴԵՊԻ
MAN RES
MENT DEI

Ատենախոսության երրորդ՝ «Հայկական «խաղաղ ատոմը» տարածաշրջանային և միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում» գլխում հետազոտության են ենթարկվել Հայաստանում ատոմային էներգետիկայի

զարգացման հեռանկարները՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական գործոնները: Մասնավորապես, քննվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ՀԱԷԿ-ի գործարկման աշխարհաքաղաքական ասպեկտները, Հայաստանի տարածքում նոր ատոմակայանի կառուցման հիմնական սցենարները, գլոբալ և տարածաշրջանային դերակատարների տեսլականն այս հարցի շուրջ, Հայկական ԱԷԿ-ի ռադիոակտիվ թափոնների վերամշակման ուղարկելու անհրաժեշտությամբ պայմանավորված արտաքին քաղաքական գործոնները: Երրորդ գլխում նաև ներկայացվել են Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման հեռանկարները ԵՄ և ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների համատեքստում:

Սիլվա Ռուբենի Խաչիկյանի ատենախոսության շրջանակներում հայկական «խաղաղ ատոմի» զարգացման քաղաքական հիմնախնդիրների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հայրենական քաղաքական գիտության համար և հնարավորություն է տալիս վեր հանել էներգետիկ (այս դեպքում ատոմային էներգետիկայի) ոլորտում առկա խնդիրների և քաղաքական գործընթացների փոխկապվածությունը: Հեղինակն օգտագործել է անհրաժեշտ աղբյուրներ, որոնք հնարավորություն են տվել մեթոդաբանորեն ճիշտ դիրքերից բացահայտել հայկական «խաղաղ ատոմի» զարգացման քաղաքական հիմնախնդիրները միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում:

Թեման կիրառական է, քանի որ ատենախոսը ոչ միայն ներկայացրել է ոլորտում առկա փորձը և քաղաքական հիմնախնդիրները, այլ նաև ներկայացրել է այդ խնդիրներ լուծման համապատասխան ուղիներ՝ առաջարկությունների տեսքով: Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է տեսական և գործնական նշանակության եզրահանգումներով, աշխատանքի արդյունքներով, եզրահանգումներով, որոնք կարող են կիրառվել ոլորտում առկա հիմնախնդիների լուծման համար Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից: Ատենախոսության արդյունքներն ունեն կիրառական նշանակություն ոչ միայն քաղաքագիտական շրջանակների համար, այլ նաև միջառարկայական հետազոտությունների և համապատասխան պետական գերատեսչությունների համար: Ատենախոսության մեջ կատարված

ՍՈՒՐՍՆԵՐԻ
ԲԱԺՆԻՆ
SOURCES
DEPARTMENT

եզրահանգումները և առաջարկությունները կարող են կիրառելի լինել էներգետիկայի ոլորտին վերաբերվող ռազմավարական նոր ծրագրեր և փաստաթղթեր մշակելիս:

Ատենախոսն առաջադրել է ճիշտ հետազոտական խնդիրներ ատենախոսության նպատակին հասնելու համար: Միևնույն ժամանակ կիրառվել է անհրաժեշտ մեթոդաբանական հիմք աշխատանքի շրջանակներում առաջադրված խնդիրների լուծման համար. ատենախոսը կիրառել է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ քաղաքագիտական և միջառարկայական մեթոդաբանություն: Հեղինակը տիրապետում է գիտական լեզվին և տերմինաբանությանը: Աշխատանքն աչքի է ընկնում իր տրամաբանական հաջորդականությամբ և ատենախոսի կողմից առաջադրված խնդիրներին հասնելու հետևողականությամբ:

Այնուհանդերձ աշխատանքում առկա են որոշ թերություններ.

1. Ատենախոսության 1.2 ենթագլխում նպատակահարմար էր էներգետիկ տրիլեմայի կոնցեպտի և համապատասխան ինդեքսի կառուցվածքի բնութագրի ներկայացումը, սակայն կարելի էր չանդրադառնալ 2021թ. էներգետիկ տրիլեմայի ինդեքսի ցուցանիշներին (էջ 32), քանի որ այն չի համապատասխանում աշխատանքի հետազոտական խնդիրներին:
2. Ատենախոսության 1.3 ենթագլխում ներկայացված ատոմային էներգետիկայի մասին հասարակական կարծիքի վերլուծությունը կարելի էր ներկայացնել առավելապես սեղմ և համառոտ:
3. Ատենախոսությունը կշահեր, եթե 2.1 ենթագլխում, որտեղ հիմնականում ատոմային էներգետիկայի ոլորտին առնչվող պաշտոնական փաստաթղթերի հիման վրա հետազոտվել են ՀՀ միջուկային պետական քաղաքականության առանձնահատկությունները, նշվեին նաև հայկական քաղաքական դաշտում ատոմային էներգետիկայի զարգացման վերաբերյալ հռետորաբանության հիմնական բնութագրական գծերը:

Սակայն այս թերությունները չեն անդրադառնում ատենախոսության կարևորության և գիտական արժեքի վրա: Այսպիսով, Միլվա Ռուբենի Խաչիկյանի «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում (քաղաքագիտական վերլուծություն)» ատենախոսությունը լիովին բավարարում է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ

և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ՀԵՀ Մարքեթինգի և հասարակայնության հետ
կապերի դեպարտամենտի պետ,
ՀԵՀ միջազգային հարաբերությունների
ամբիոնի դասախոս, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ռ.Ս. Մելիքյան

ՀԵՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
EUA HUMAN RESOURCES
MANAGEMENT DEPARTMENT

18/01/2023թ.